բանտապանին սենեակը եւ մերձենալով մարդուն հրամայական ձայնով

— Տո՛ւր բանտին բանալիքները, զրուցեց, եթէ չես ուզէր մեռնիր

— Ինչպէ՞ս կարելի է, որ ես յանձն առնում այդպիսի հրամանի մը հնազանդիլ. միթէ՛ ես դաւաճան եմ:

— Ես է՛լ ժամանակ չունիմ կորսնցնելու, տղաք, կ'ապեցէ՛ք այդ մարդը եւ գտէք բանտին բանալիքը:

Ան ատեն արաբ կինը իւր բոլոր հնարագիտութիւնն ի գործ գրաւ, սկսաւ լալ, ողբալ, աղաչել, որ իր էրկանը չի վնասեն. եւ երբ մարդը կը կապէին ինք նորա գրպանեն կը հանէր բանալիքը, կ'ուտար Խոսրովու՝ կ'աղաչէր, որ նորա կենաց խնայեն, կը խոստանար, որ բանտեալը ողջ առողջ իրենց յանձնէ եւ լապտէր ձեռքը ու պահապանաց ամենեն պարզամիտը առջեւը ձգած կը մտնէր բազմութեամբ բանտին խորերը, ուր կը գտնուէր Գուրգէն տխուր՝ քունի մէջ թաղուած: Է հոն դուռը բանալով՝

— Ահա՛ առէք ձեր մարդը, միայն ի սէր աստուծոյ իմ էրկանս եւ մեր մարդկանց մի վնաս էք,— կ'ըսէր:

Խոսրով ան ատեն լապտերն առած խավարչտին բանտին մէջ մտաւ:

— Գուրգէ՛ն որդեակ, որդեակ Գուրգէն, ո՞ւր ես, կանչեց:

Շղթայներու դղրդիւն մը պատասխանեց այս ձայնին, վասնզի Գուրգէն քունէ զարթած շարժեցաւ եւ նստաւ:

— Գուրգէն, Խոսրովին ձայնը չե՞ս ճանչեր:

— Դո՞ւ էլ հոս կ'ուգաս:

— Վե՛ր կաց, երթանք, քեզ ազատելու եկանք, մի՛ շփոթիր: